

Մարզպետ Սարգիս Սահակյանը քաղաքացիների ընդունելություն կատարեց Ապարանում

Մարտի 19-ին մարզպետ Սարգիս Սահակյանը քաղաքացիների ընդունելություն կատարեց Ապարանի տարածաշրջանում :

Մինչ ընդունելությունը, մարզպետն այցելեց Ապարան բժշկական կենտրոնի ծննդատուն: Նա շնորհավորեց մայրիկներին՝ կանանց տոների կապակցությամբ, երջանկություն եւ ամենայն բարիք մաղթեց նրանց եւ իրենց նորածին բալիկներին, որոնց մեջ, ի դեպ, կային երկվորյակ եղբայրներ: Մարզպետի կողմից բոլորին ընծայվեց նորածնային պարագաներ, հագուստեղեն:

Այնուհետեւ Ապարանի քաղաքապետարանում կայացավ քաղաքացիների ընդունելությունը, որին ներկայացել էին ինչպես Ապարան քաղաքի, այնպես էլ տարածաշրջանի գյուղական բնակավայրերի բնակիչները: Ընդունելության մասնակիցների թիվն, ընդհանուր առմամբ, 40 էր: Մարզպետին ուղղված՝ բուժօգնության, աշխատանքային, սոցիալական, բնակարանային, անձնական եւ այլ խնդիրներին վերաբերող դիմումները ստացան դրական լուծում, արվեցին անհրաժեշտ պարզաբանումներ: 36 քաղաքացի ստացավ դրամական աջակցություն:

Սոցիալապես անապահով մի խումբ ընտանիքների մարզպետի կողմից հանձնվեցին հագուստներ, տաք ծածկոցներ եւ առաջին անհրաժեշտության այլ պիտույքներ պարունակող ծանրոցներ: